

քիսեղեկի եւ իր շուրջը զտնուողներու պահանջն էր, որ Մովսէս հեռանայ առ հասարակ Հայաստանէն. «Յ'լ յայսմ աշխարհէ եւ զնա՛ աստի ուր եւ կամիս» (Ա. 53) :

## 12. ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՒԱՆ

Կաթողիկոսը թէպէտ վերադարձուց Մովսէսին սպասները, բայց չդադրեցաւ յարուցանել անոր առջեւ դժուարութիւններ :

Տաղտկացած այս հալածանքներէ կ'որոշէ Մովսէս անցնիլ արեւմուտք (Օսմանեան բաժին) եւ հոն շարունակել իւր քարոզչական գործունէութիւնը : Այս դիտաւորութեամբ ալ հասաւ Երեւան, անցնելու անկէ Կարսի ճանապարհով Կարին (Առ. 293|94) :

Դրութիւնը նաեւ հոս չգտաւ մխիթարական : Կը գրէ Ղ. Գառնեցի թէ Մովսէս Սիսական աշխարհէն եկաւ «յերկիրս Արարատեան. եւ տեսանէր խանդարեալ եւ եղծեալ զկարգս եւ զսահմանս եկեղեցոյ ի հերատուկ եւ ի մեղմեխ առաջնորդաց ժամանակիս. եւ թաղծեալ արտոմէր եւ հոգայր, թէ զիարդ լիցի հնար նորոգման եւ պայծառութեան սուրբ հաւատոյ, կարգաց եւ կրօնից : Եւ սկսաւ մեծաւ աշխատութեամբ եւ բազում ջանիւ խրատել եւ ուսուցանել զեկեղեցականս եւ զաշխարհականս» :

Այս միջոցին Արարատեան աշխարհին կուսակալն էր Ամիրզունայ խան, հայասէր եւ պատուական անձնաւորութիւն մը, որ կին